Հավելված
ՀՀ կառավարության 2014 թվականի
հուլիսի 10-ի N 788 - Ն որոշման

«Հավելված N 2
ՀՀ կառավարության 2012 թվականի
հունիսի 28-ի N 810-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՏՈՒՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՎԱՐՈՂԻՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՖՈՆԴՈՒՄ ԲԱՎԱՐԱՐ ՄԻՋՈՑՆԵՐ ՉԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՖՈՆԴԻՆ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են երաշխիքային ֆոնդի կողմից Հայաստանի Հանրապետության կուտակային կենսաթոշակային համակարգի բաղադրիչի մասնակիցների ռեեստրը վարողին՝ մասնակցի կատարած սոցիալական վճարների ամբողջ գումարի՝ ճշգրտված տարեկան գնաճով, և նրա կենսաթոշակային հաշվում առկա կենսաթոշակային ֆոնդի (ֆոնդերի) փայերի հաշվարկային արժեքների հանրագումարի տարբերության չափով երաշխիքային ֆոնդի կողմից հատուցվող գումարը մասնակիցների ռեեստրը վարողին փոխանցելու հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգում օգտագործվող հասկացությունները համապատասխանում են «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք» նախատեսված սահմանումներին:

II. ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՎԱՐՈՂԻՆ ՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԻ ՎՃԱՐՈՒՄԸ

3. Երաշխիքային ֆոնդի հաշվին հատուցվող գումարը վճարվում է օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում մասնակիցների ռեեստրը վարողի հաշվին՝ Բանկ-մեյլ համակարգով՝ նշելով մասնակիցների ռեեստրը վարողի տեղեկատվական համակարգի կողմից յուրաքանչյուր հատուցման դեպքի առնչությամբ գեներացված եզակի հղման համարը:

III. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՖՈՆԴՈՒՄ ԲԱՎԱՐԱՐ ՄԻՋՈՑՆԵՐ ՉԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՖՈՆԴԻՆ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ

4. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը երաշխիքային ֆոնդից Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 28-ի N 810-Ն որոշման N 1 հավելվածի III բաժնով սահմանված վճարման հայտն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում հատուցման ենթակա գումարի և երաշխիքային ֆոնդում առկա միջոցների տարբերության չափով վճարում է երաշխիքային ֆոնդի՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում բացված դրամական հաշվին՝ Բանկ-մեյլ համակարգով:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ